«MyAmeria-ից Doing Digital» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. «MyAmeria-ից Doing Digital» գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Վիճակախաղ) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Բանկ) կողմից:
2. Ներքոգրյալ պայմանների կատարման պարագայում վիճակախաղի մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում մասնակցելու «Doing Digital Forum» միջոցառման մասնակցության 15 տոմսերի խաղարկությանը:
3. Վիճակախաղին կարող են մասնակցել Ամերիաբանկի ֆիզիկական անձ հաճախորդ հանդիսացող անձինք (այսուհետ՝ Հաճախորդ կամ Հաճախորդներ), ովքեր 2023 թ. մարտի 14-ից 2023 թ. մարտի 25-ը Երևանի ժամանակով 23:59-ը ներառյալ MyAmeria հավելվածով Բանկին կուղարկեն հաղորդագրություն՝ թեմաների հատվածից ընտրելով Doing Digital տարբերակը:
4. Վիճակախաղի պայմանը կատարելու դեպքում հաճախորդը Բանկում գրանցված իր էլ. փոստին, իսկ չունենալու դեպքում Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին կստանա Վիճակախաղի մասնակցության անհատական կոդ:
5. Վիճակախաղի մասնակցությունն անվճար է, բացառությամբ Հաճախորդի կողմից նամակի ուղարկման համար ծախսված գումարի:
6. Հաճախորդի՝ Վիճակախաղին մասնակցելու իրավունքը ծագում է Վիճակախաղի պայմաններին համապատասխան անհատական կոդը/կոդերը Բանկում գրանցված Հաճախորդի էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ չունենալու դեպքում Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին ստանալու պահից:
7. Վիճակախաղի արդյունքներով հաղթող կճանաչվի այն Հաճախորդը, որի անհատական կոդը պատահականության սկզբունքով կընտրվի վիճակահանության ընթացքում:

8. Վիճակահանությունը /Վիճակախաղի արդյունքների ամփոփումը/ կիրականացվի Ամերիաբանկի ֆեյսբուքյան էջի ուղիղ հեռարձակման միջոցով մինչև 2023 թ. ապրիլի 30-ը ներառյալ: Վիճակախաղի ուղիղ հեռարձակման օրվա և ժամի մասին բոլոր մասնակիցները կծանուցվեն Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեի, իսկ չունենալու դեպքում Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարի միջոցով:
9. Վիճակախաղի արդյունքում հաղթող ճանաչված համարը կհրապարակվի Ամերիաբանկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում մինչև 2023 թ. ապրիլի 30-ի Երևանի ժամանակով ժամը 23:59:
10. Հաղթող հաճախորդին Բանկը կտեղեկացնի հաղթող ճանաչվելու մասին Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեի և Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարի միջոցով:
11. Հաղթող հաճախորդների հետ Բանկը լրացուցիչ կապ կհաստատի՝ նշելով նվերի ստացման եղանակը և վայրը:
12. Նվերը ստանալու համար հաղթողը պետք է անձամբ մոտենա Բանկի կողմից նշված վայրը՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Գովազդային վիճակախաղի կազմակերպիչ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2
Հեռ.՝ 010 561111